Հավելված 6
ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-24/29 **ծածկագրով**
գնանշման հարցման հրավերի

ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԱՍԻԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ << ՀԱՅԱՍԱ>> ԹԱՂԱՄԱՍԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱԳԾԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Ն ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-24/29

Գ.Ամասիա «11» Դեկտեմբերի
2024թ.

Ամասիայի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Ջ.Հարությունյանի -ի, որը գործում է համայնապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, <<ՎԱԼ-ԱՐՏ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տ. Գևորգյանի և << ՍՈԼԻԴ - ՔՈՆՍԹՐԱՔՇՆ >> ՍՊԸ-ն , ի դեմս ընկերության տնօրեն Ռ.Հայրապետյանի, համաձայն 27-11-2024թ-ի թիվ 01 համատեղ գործունեության կազմելու մասին համաձայնագրի ,որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա այսուհետ՝ << Գործընկեր-1>> և <<Գործընկեր-2>>, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրի << Հայասա>> թաղամասի խմելու ջրի ջրագծի կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-24/29 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալատուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2024-2025թթ-ին:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ << օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները: 3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել ..... օրվա ընթացքում:

Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալատուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնոյությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եաղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[1]

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերին և երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:[2]

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:[3]

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը

---

[1] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:*

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե կիրառելի չէ:*

[3] *4.1 կետի 2-րդ պարբերությունը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա չի հանդիսանում շինարարական ծրագիրը:*

Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված _____ աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.4 Եթե պայմանագրի 4.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 48300000 (քառասուն ութ միլիոն երեք հարյուր հազար) << դրամ, որից 8050000(ութ միլիոն հիսուն հազարը) << դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին 48300000 (քառասուն ութ միլիոն երեք հարյուր հազար) << դրամ՝ որից 8050000 (ութ միլիոն հիսուն հազարը) << դրամը՝ ԱԱՀ-ն:

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև ---------- (----------) << դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Ընդ որում կանխավճար հատկացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ ապահովել է շինարարության կազմակերպման աշխատանքների մեկնարկման փուլում նախատեսված միջոցառումները՝ քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է տվյալ շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:[4]

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:[5]

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է

---

[4] *5.1.1 կետի 2-րդ պարբերությունը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկան չի հանդիսանում շինարարական ծրագիր:*

[5] *Կապալառուն կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[6]

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[7] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր

---

[6] *Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»*

[7] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սպանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները[8]

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1.	Շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը չկատարելը	Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով
2.	Տեխնիկական անվտանգության նորմերի չպահպանելը	Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով
3.	Սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերի չպահպանելը	Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[9]

---

[8] *Եթե գնման առարկան չի հանդիսանում շինարարական ծրագիր 6.5.1 կետը հանվում է պայմանագրի նախագծից, իսկ 1.2 կետից հանվում են «և հաստատված նախագծանախահաշվային » բառերը և 6.4 կետից հանվում է 6.5.1 կետին կատարված հղումը:*

[9] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[10]

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[11]

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի

---

[10] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով:*

[11] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով

սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[12]

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Համայնքի ղեկավար Ջ. Հարությունյան Ամասիայի համայնքապետարան	«ՎԱԼ-Արտ» ՍՊԸ
ՀՎՀՀ 05544328	ՀՀ, Արմավիրի մարզ գ.Ծաղկունք
ՀՀ 900222051271	Հոկտեմբերյան 15
Բանկը Կենտրոնական գանձապետարան	ՀՎՀՀ՝ 04440701
	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
	«Էջմիածին» մ/ճ
	Հ/Հ՝ 163118053541
	տնօրեն՝ Տ.Գևորգյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

---

[12] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 4-րդ նախադասությունը, իսկ 5-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված թիվ 1
«11» դեկտեմբերի 2024 թ. կնքված
ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-24/29 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի «Հայասա» թաղամասի խմելու ջրի ջրագծի կառուցման նախագծի լրամշակման

N/N	Գնի հիմքը	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Արժեքը հազ, դրամ	
					Միավորի	Ամբողջը
1	2	3	4	5	6	7
		Արտաքին ջրագիծ	-	-		
1	1-1551	խրամուղու փորում 3-րդ կարգի բնահողում էքսկավատորով	1000մ^3	2,0728	693,328	1437,130
2	1-1552	4-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով փոսորակում	1000մ^3	1,492	900,492	1343,534
3	1-1553	5-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով փոսորակում	1000մ^3	0,3745	1211,996	453,893
4	1-962	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ^3	166,00	5,883	976,658
5	1-952	5-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ^3	40,00	15,133	605,331
6	23-1	Հիմնատակի կառուցում ավազով 10սմ հաստ.	մ^3	160,00	11,971	1915,358
7	22-118	Պոլիէթիլենային խմելու ջրի խողովակների տեղադրում, փորձարկումով Φ63x4,7 /PN-12,5/	մ	1224,9	1,892	2316,903
8	22-117	Պոլիէթիլենային խմելու ջրի խողովակների տեղադրում, փորձարկումով Φ40x2,4 /PN-10/	մ	640,6	0,784	501,984
9	22-117	Պոլիէթիլենային խմելու ջրի խողովակների տեղադրում, փորձարկումով Φ32x2,0 /PN-10/	մ	137,9	0,638	87,958
10	22-117	Պոլիէթիլենային խմելու ջրի խողովակների տեղադրում, փորձարկումով Φ25x1,8 /PN-10/	մ	280,5	0,580	162,558
11	22-314	Խողովակների լվացում ախտահանումով	մ	2283,9	0,111	252,887
12	23-1	Ծածկող պաշտպանիչ շերտ ավազից	մ^3	400,00	11,971	4788,394
13	1-1635	Բնահողի հետլիցք բուլդոզերով	1000մ^3	3,5853	96,741	346,845
14	1-1587	3-րդ կարգի բնահողի բարձում էքսկավատորով, ինքնաթափ ավտոմեքենա	1000մ^3	0,560	637,662	357,091

15	Գն10կ1	Բնահողի տեղափոխում ա/ինքնաթափով մինչև 1կմ	տն	840,00	1,045	877,632
16	22-365	Գոտի միացում Φ63/Φ40	հատ	2,00	2,223	4,446
17	22-365	Գոտի միացում Φ63/Φ25	հատ	1,00	2,151	2,151
18	22-365	Գոտի միացում Φ63/Φ20	հատ	3,00	2,108	6,323
19	22-365	Գոտի միացում Φ40/Φ20	հատ	16,00	1,978	31,643
20	22-365	Գոտի միացում Φ40/Φ25	հատ	1,00	1,934	1,934
21	22-365	Գոտի միացում Φ25/Φ20	հատ	7,00	1,790	12,530
22	22-365	Եռաբաշխիչ Φ63/Φ63	հատ	1,00	7,895	7,895
23	22-365	Եռաբաշխիչ Φ63/Φ40	հատ	1,00	7,058	7,058
24	22-365	Եռաբաշխիչ Φ40/Φ25	հատ	1,00	3,450	3,450
25	22-365	Խցափակում Φ40	հատ	3,00	3,233	9,700
26	22-365	Խցափակում Φ25	հատ	6,00	2,728	16,369
27	22-365	Պողպատ- պոլիէթիլենե միացություն Φ57/Φ63	հատ	1,00	5,903	5,903
		Ջրի դիտահոր ՋԴՀ-1	-	-		
1	1-962	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ^3	26,10	5,883	153,559
2	8-11	Խճի նախաշերտի կառուցում	մ^3	1,20	9,436	11,323
3	6-1 1-1	Բետոնե հատակի կառուցում B 12,5 բետոնով	մ^3	1,20	42,219	50,663
4	22-446	Հավաքովի ե/բ դիտահորերի տեղադրում Φ1500	մ^3	3,15	62,692	197,480
5		Հավաքովի ե/բ դիտահոր 1500x1000	հատ	3,00	63,390	190,171
6		Հավաքովի ե/բ դիտահոր 1500x500	հատ	3,00	43,299	129,898
7		Հավաքովի ե/բ կափարիչ Φ1800, թուջե մտոցի հետ միասին	հատ	3,00	176,806	530,419
8	1-969	3-րդ կարգի բնահողի հետլիցք ձեռքով	մ^3	13,20	1,704	22,498
9	1-969	Բնահողի բարձում ինքնաթափ ա/մեքենա ձեռքով	մ^3	12,90	1,704	21,987
10	Գն10կ1	Բնահողի տեղափոխում ա/ինքնաթափով մինչև 1կմ	տն	19,35	1,045	20,217
		Հակահրդեհային հիդրանտ	-	-		
1	22-365	Պողպատ- պոլիէթիլենե միացություն Φ76/Φ75	հատ	4,00	7,347	29,387
2	22-384	Սողնակների տեղադրում Φ80	հատ	2,00	34,631	69,262
3	Շուկա	Կցաշուրթ Φ80	հատ	4,00	4,619	18,474
4	16-184	Հակահրդեհային հիդրանտի տեղադրում Φ80	հատ	2,00	142,884	285,767
5	22-65	Պողպատե խողովակների տեղադրում Φ76x3,5	մ	3,00	3,835	11,506
6	15-614	Մետաղ.խողովակների յուղաներկում 2անգամ	մ^2	0,72	1,642	1,182
7	6-1 1-1	Բետոնե հենարանի կառուցում B 12,5 բետոնով	մ^3	0,024	42,219	1,013
		Սարքավորումներ ՋԴՀ-1	-	-		
1	22-365	Պողպատ- պոլիէթիլենե միացություն Φ57/Φ63	հատ	3,00	5,903	17,710
2	16-136	Փականի տեղադրում Φ50	հատ	2,00	14,752	29,503
3	22-65	Պողպատե խողովակների տեղադրում Φ76x3,5	մ	4,50	3,835	17,260
4	15-614	Մետաղ.խողովակների յուղաներկում 2անգամ	մ^2	1,20	1,642	1,971
		ՋԴՀ	-	-		
1	1-962	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ^3	72,90	5,883	428,906
2	8-11	Խճի նախաշերտի կառուցում	մ^3	6,21	9,436	58,596
3	6-1 1-1	Բետոնե հատակի կառուցում B 12,5 բետոնով	մ^3	6,21	42,219	262,181
4	22-446	Հավաքովի ե/բ դիտահորերի տեղադրում Φ1000	մ^3	14,04	62,692	880,197
			հատ	27,00	41,135	1110,632

6		Հավաքովի ե/բ կափարիչ Φ1200, թուջե մտոցի հետ միասին	հատ	27,00	118,669	3204,075
7	1-969	3-րդ կարգի բնահողի հետլիցք ձեռքով	մ^3	32,40	1,704	55,222
8	1-969	Բնահողի բարձում ինքնաթափ ա/մեքենա ձեռքով	մ^3	40,50	1,704	69,028
9	Գն10կ1	Բնահողի տեղափոխում ա/ինքնաթափով մինչև 1կմ	տն	62,10	1,045	64,882
		Սարքավորումներ	-	-		
1		Ձրաչափ Φ1/2"	հատ	30,00	8,819	264,560
2	16-136	Փականի տեղադրում Φ1/2"	հատ	30,00	7,578	227,348
3		Ֆիլտր Φ1/2"	հատ	30,00	1,891	56,722
4	22-365	Պողպատ- պոլիէթիլենե անցումΦ1/2" Φ20	հատ	30,00	1,891	56,732
5	22-117	Պոլիէթիլենային խմելու ջրի խողովակների տեղադրում, փորձարկումով Φ20	մ	90,0	0,652	58,718
6	Շուկա	Խողովակների ջերմամեկուսացում պոնիպոլիստիրոլե կիսախողովակներով Φ20 50մմ հաստ.	մ	90,00	1,227	110,414
		Պոմպակայանի կառուցում	-	-		
1	1-1701	Տարածքի հարթեցում բուլդոզերով տեղափոխելով 10մ	1000մ^3	0,0104	279,387	2,906
2	1-1587	4-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով, բարձելով ինքնաթափ ավտոմեքենա	1000մ^3	0,0463	811,854	37,589
3	Գն10կ1	Բնահողի տեղափոխում ա/ինքնաթափով մինչև 1կմ	տն	74,10	1,045	77,420
4	1-1546	4-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով, կողալիցքով	1000մ^3	0,0533	655,151	34,920
5	1-962	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ^3	5,00	5,883	29,417
7	6-20 1-20	Ժապավենային հիմքերի կառուցում B 12.5 բետոնով	մ^3	21,94	51,368	1127,006
8	15-256	Պատերի սավաղում g/ավազային շաղախով	մ^2	47,00	2,493	117,149
9	8-27	Պատերի ուղղահայաց ջրամեկուսացում 2 շերտ բիտումով	մ^2	47,00	1,069	50,259
10	6-33 3-4	Միաձույլ ե/բ բարձիկների կառուցում B 12.5 բետոնով պոմպերի համար	մ^3	0,960	62,926	60,409
11		Ամրան Φ12A500C	տն	0,0198	408,935	8,097
12	9-122 17-5	Մետաղական կարկասի կառուցում	տն	0,52725	108,454	57,183
13		Պողպատե խողովակ 80x80x3	մ	56,00	3,551	198,831
14		Անկյունակ L75x60x5	մ	2,20	2,454	5,398
15		Պողպատե խողովակ 50x50x3	մ	54,00	2,093	113,012
16	9-31	Պոմպակայանի սենդվիչ պանելներով պատի մոնտաժում /10սմ հաստ./	մ^2	44,40	17,835	791,874
17	9-27	Պոմպակայանի սենդվիչ պանելներով տանիքի մոնտաժում /10սմ հաստ./	մ^2	24,30	13,616	330,878
18	12-280	Ցինկապատ թիթեղ 0,55մմ	մ^2	20,00	4,970	99,397
19	9-122 17-5	Մետաղական աստիճանի և բռնածողի կառուցում	տն	0,1695	108,454	18,383
20		Տաշտաձև հեծան N12	մ	7,20	4,691	33,774
21		Պողպատե ծալքավոր թիթեղ 6մմ հաստ.	տն	0,075	822,690	61,702
22		Պողպատե խողովակ Φ32x2,5	մ	3,30	0,866	2,858
23		Պողպատե խողովակ 20x20x1,5	մ	24,20	0,491	11,876
24	15-614	Մետաղ.էլեմենտների յուղաներկում 2անգամ	մ^2	38,40	1,642	63,057
25	6-84	Ներդիր էլեմենտների տեղադրում	տն	0,02944	120,274	3,541
26		պողպ.թիթեղ 200x200x10 ներդիր էլեմենտների համար	տն	0,02512	685,575	17,222

27		ամրան Φ12A500Cներդիր էլեմենտների համար	տն	0,00432	408,935	1,767
28		Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլի պատուհանի տեղադրում, բացվող	մ^2	0,60	29,938	17,963
29		Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլի պատուհանի տեղադրում, չբացվող	մ^2	0,60	19,608	11,765
29		Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլի դռան տեղադրում	մ^2	2,00	39,228	78,455
30	11-2	Հատակի բնահողի տոփանում խճով /20-40մմ/	100մ^2	0,112	37,751	4,228
31	11-11	Հատակի բետոնե նախաշերտի կառուցում B 7.5 բետոնով	մ^3	1,12	42,086	47,136
32	11-18 11-19	Զրամեկուսիչ շերտի կառուցում երկշերտ իզոգամով	մ^2	11,20	4,661	52,198
33	11-55 11-56	Հատակի ցեմ, ավազային հարթ շերտի կառուցում 30-50մմ հաստ	մ^2	11,20	2,229	24,961
34	11-2	Սալվածքի բնահողի տոփանում խճով /20-40մմ/	100մ^2	0,127	37,751	4,794
35	11-11	Սալվածքի բետոնե նախաշերտի կառուցում B 7.5 բետոնով	մ^3	1,27	42,086	53,449
36	11-55 11-56	Սալվածքի ցեմ, ավազային հարթ շերտի կառուցում 30-50մմ հաստ	մ^2	12,70	2,229	28,304
37	6-1 1-1	Սալվածքի եզրագծի կառուցում B 7,5 բետոնով	մ^3	0,52	40,379	20,997
38	11-77	Սալվածքի երկաթայնացում	100մ^2	0,127	28,260	3,589
		Պոմպերի տեղադրում	-	-		
1	1-1546	4-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով, կողալիցքով	1000մ^3	0,02	655,151	13,103
2	1-962	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ^3	2,00	5,883	11,767
3	23-1	Հիմնատակի կառուցում ավազով 10սմ հաստ.	մ^3	0,90	5,874	5,287
4	23-1	Ծածկող պաշտպանիչ շերտ ավազից	մ^3	2,50	5,874	14,686
5	1-1635	Բնահողի հետլիցք բուլդոզերով	1000մ^3	0,0186	96,741	1,799
6	1-969	Ավելորդ բնահողի բարձում ձեռքով ինքնաթափ ավտոմեքենա	մ^3	3,40	1,704	5,795
7	Գն10կ1	Բնահողի տեղափոխում ա/ինքնաթափով մինչև 1կմ	տն	5,10	1,045	5,328
8	16-55	Պողպատե խողովակների տեղադրում Φ57x3,5	մ	36,00	3,746	134,863
9	16-199	Զրաչափի հանգույցի տեղադրում Φ50մմ	հատ	1,0	47,792	47,792
10	22-384	Սողնակների տեղադրում Φ50	հատ	5,00	30,301	151,504
11	Շուկա	Կցաշուրթ Φ50	հատ	10,00	3,608	36,083
12	22-384	Սողնակների տեղադրում Φ32	հատ	4,00	25,971	103,883
13	Շուկա	Կցաշուրթ Φ32	հատ	8,00	3,320	26,557
14	22-365	Պողպատ- պոլիէթիլենե միացություն Φ57/Φ63	հատ	2,00	5,903	11,807
15	16-127	Հակարդած փականի տեղադրում Φ32	հատ	2,00	10,228	20,457
16	Տեղեկ.	Ֆիլտր Φ50	հատ	1,00	6,495	6,495
17	16-134	Փականի տեղադրում Φ25	հատ	1,00	8,150	8,150
18	17-101	Պողպատե խողովակների խցափակում Φ50	հատ	2,00	4,144	8,288
19	22-399	Միացում գոյություն ունեցող ցանցին Φ100	հատ	1,00	7,602	7,602
20	15-621 164-7	Պողպատե խողովակների ներկում յուղաներկով 2 անգամ	մ^2	8,60	1,125	9,678

21	16-33	Պոլիվինիքլորիդե կոյուղու խողովակների տեղադրում Φ50	մ	18,00	1,686	30,356
22	17-36	Ալյումինե հոսակի տեղադրում Φ50	հատ	1,00	6,662	6,662
23	18-165	Պոմպի տեղադրում Q=3,5 մ^3/ ժամ, H=122մ, շարժիչի հզորությունը 2,2 կվտ /HILO VE 216/	հատ	2,00	5386,326	10772,652

Ընդամենը	40397,380
Ա.Ա.Հ. 20%	8079,476
Ամբողջը	48476,856

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Համայնքի ղեկավար Ջ.
Հարությունյան Ամասիայի
համայնքապետարան
ՀՎՀՀ 05544328
ՀՀ 900222051271
Բանկը Կենտրոնական
գանձապետարան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՎԱԼ-Արտ» ՍՊԸ
ՀՀ, Արմավիրի մարզ գ.Ծաղկունք
Հոկտեմբերյան 15
ՀՎՀՀ՝ 04440701
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
«Էջմիածին» մ/ճ
Հ/Հ՝ 163118053541
տնօրեն՝ Տ.Գևորգյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 11 » 2024 թ. կնքված
ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-24/29 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*

ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի <<Հայասա>> թաղամասի խմելու ջրի ջրագծի կառուցման ե ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի <<Հայասա>> թաղամասի խմելու ջրի ջրագծի կառուցման	Ֆին, միջոցներ հատկացվելու և համաձայնագրի կնքման օրվանից	180 օր
ԸՆԴԱՄԵՆԸ		Ֆին, միջոցներ հատկացվելու և համաձայնագրի կնքման օրվանից	180օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Համայնքի ղեկավար Ջ.
Հարությունյան Ամասիայի
համայնքապետարան
ՀՎՀՀ 05544328
ՀՀ 900222051271
Բանկը Կենտրոնական
գանձապետարան

/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՎԱԼ-Արտ» ՍՊԸ
ՀՀ, Արմավիրի մարզ գ.Ծաղկունք
Հոկտեմբերյան 15
ՀՎՀՀ՝ 04440701
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
«Էջմիածին» մ/ճ
Հ/Հ՝ 163118053541
տնօրեն՝ Տ.Գևորգյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«11» դեկտեմբեր 2024 թ. կնքված
ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-24/29 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45241142	ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի <<Հայասա>> թաղամասի խմելու ջրի ջրագծի կառուցման	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %

<< դրամ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Համայնքի ղեկավար Ջ. Հարությունյան
Ամասիայի համայնքապետարան
ՀՎՀՀ 05544328
ՀՀ 900222051271
Բանկը Կենտրոնական
գանձապետարան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՎԱԼ-Արտ» ՍՊԸ
ՀՀ, Արմավիրի մարզ գ.Ծաղկունք
Հոկտեմբերյան 15
ՀՎՀՀ՝ 04440701
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
«Էջմիածին» մ/ճ
Հ/Հ՝ 163118053541
տնօրեն՝ Տ.Գևորգյան

/ստորագրություն/
Կ.Տ